ՈՒՍՏԱՐԻ 2026-2027 / ANNÉE UNIVERSITAIRE 2026-2027
Փորձնական քննություններ/ Examens blancs

ARMENIEN / ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

Temps imparti / Ժամանակը: 150 minutes / 150 րոպե
Les dictionnaires ne sont pas autorisés. /Բառարանների գործածումն արգելվում է:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Բոլոր առաջադրանքները կատարել տրամադրված հարցարանների համապատասխան բաժիններում՝ առանց ավելորդ անգամ արտագրելու:

Առաջադրանք 1. (22 միավոր)
1.1. առաջադրանքը գնահատվում է 20 միավոր: Յուրաքանչյուր սխալ կետադրման համար հանվում է 0,5 միավոր, յուրաքանչյուր սխալ ուղղագրության համար՝ 1 միավոր:
1.2. և 1.3. առաջադրանքների ճիշտ պատասխանները գնահատվում են 2-ական միավոր:
Առաջադրանք 2. (14 միավոր)
2.1. առաջադրանքի համար տրվում է 6 միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:
2.2. առաջադրանքի համար տրվում է 8 միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:
Առաջադրանք 3. (16 միավոր)
3.1., 3.2. առաջադրանքների համար տրվում է 6-ական միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:
3.3. առաջադրանքը գնահատվում է 4 միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 2 միավոր:
Առաջադրանք 4. (16 միավոր)
4.1., 4,2 առաջադրանքները գնահատվում են 4-ական միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:
4.3. առաջադրանքը գնահատվում է 8 միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:
Առաջադրանք 5. (12 միավոր)
5.1. և 5.2. առաջադրանքների համար տրվում է 4-ական միավոր. յուրաքանչյուր ամբողջական ճիշտ պատասխան գնահատվում է 2 միավոր:
5.3. և 5.4. առաջադրանքների ճիշտ պատասխանները գնահատվում են 2-ական միավոր:

Յուրաքանչյուր հարակից սխալից հանվում է 0,5:

Առաջադրանք 1. (22 միավոր)

1.1. *Ըստ անհրաժեշտության՝ լրացնել բաց թողած տառերն ու կետադրել (18 միավոր).*

Ուղղաբերձ լեռնաշղթայի՝ ամպերով ծածկված սարալանջին՝ անդորր հովտի վրա, որի մեջտեղով գլորվում է լեռնային շառաչուն գետը, ձգվում է այն աննշան քաղաքը, դեպի ուր այդ ահասարսուռ օրերին ընթանում էին մարդկանց և ձիերի հոգնած ու տանջալլուկ շարքերը՝ համակված անձկությամբ և ջղագրգիռ սպասումներով:

Իջնելով բարձրաբերձ, սիգապանծ սարերից, որոնց գոգերում լեռնային արծվի բների պես կծկվել էին քարակոփ տներով գյուղերը,(՝) նրանք դանդաղընթաց գնում էին՝ ամփոփված յուրաքանչյուրն իր ներաշխարհում, աշխատելով վանել կցկտուր, խառնիճաղանջ մտքերը: Ոմանք գալիս էին բարձրավանդակի հարավարևելյան կողմում ձգվող տափարակից, որի մեջտեղում ականակիտ լիճն էր՝ ճկուն եղեգներով, խիտ թփուտներով, գաճաճ ալոճենիներով երիզված: Գմբեթարդ վանքը հեղեղատի բարձունքից ցոլք էր գցում ջրերի՝ հայելու պես անդրադարձնող մակերևույթին, և թվում էր՝ լճի տակ սուզվել է մռայլ մի վանք, ու սպիտակ բադերը մրափում են նրա մռայլ խորաններում:

Խորդուբորդ ուղիներում ծառս էին լինում ձիերը, վրնջում մետաղաձայն, երկարաձոր՝ կարծես վերջին հրաժեշտն ուղարկելով լեռնային մաքուր լճերին ու տափաստաններին: Մեկը թավ էր վրնջում, մյուսը՝ արծաթահնչյուն, երրորդը, բարձրանալով հետևի ոտքերի վրա, ձգում էր սանձը՝ չցանկանալով իջնել այդ անվերադարձ ուղիով:

«Ե՞րբ կհասնենք իջևանատուն,- իր մեջ ամփոփված՝ մտածում էր առջևից ընթացող ձիավորը.- արդեն երկու գիշեր է՝ չենք քնել, ճանապարհն էլ կարծես վերջ չունի»:

1.2. Նշել այն շարքը, որի բաղադրյալ հատուկ անունների միայն առաջին բաղադրիչներն են գրվում մեծատառով (2 միավոր):

1. ՍԵՎ ՈՍԿԻ, ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ, ԳԵՂԱՄԱ ԼԵՌՆԵՐ, ՀՈՒԼՅԱՆ ՏՈՄԱՐ, ԱՐԺՈՒՅԹԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
2. ՍԱՍԱՆՅԱՆ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆ, ՆՈՅ ՆԱՀԱՊԵՏ, ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿ, ԱՐՏԱՇԵՍՅԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ՄԵԾ ԵՂԵՌՆ
3. ՊԱՆԱՄԱՅԻ ՋՐԱՆՑՔ, ՀԱՅԿ ՆԱՀԱՊԵՏ, ՄՈՒՇԵՂ ՍՊԱՐԱՊԵՏ, ԱՂԲՅՈՒՐ ՍԵՐՈԲ, ՍԱՆ ՖՐԱՆՑԻՍԿՈ
4. ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ, ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԵՐԵՆ, ԳՈՐԴՅԱՆ ՀԱՆԳՈՒՅՑ, ՀԻՆ ՀՌՈՄ, ՇԱՄԻՐԱՄԻ ԿԱԽՈՎԻ ԱՅԳԻՆԵՐ

1.3. Նշել այն տողը, որի բոլոր բառերի բոլոր բաղադրիչները գրվում են միասին (2 միավոր):

1. կողք (կողքի), պատ (շար), Հրազդան (ջէկ), լույս (ընծայում), ի (հեճուկս)
2. աշխարհե (աշխարի), գլուխ (կոնծի), հարավ (արևելյան), մեկ (մեկու), դար (ու) փոս
3. վեց (հազարական), քիթ (բերան), մեկ (մեկի), թավալ (գլոր), ափ (հանում)
4. առ (միշտ), նոր (գվինեական), մինչև (իսկ), տուն (թանգարան), տնե (տուն)

Առաջադրանք 2. (14 միավոր)

2.1. *Սյունակներում դեմ դիմաց գրված բառերից ընտրելով մեկական արմատ և տրված վերջածանցներից մեկը՝ կազմել վեց բարդ ածանցավորբառ (6 միավոր):*

Արջորս	ականակիր	ան	ականորսիչ
գեղաչ	կապտերանգ	իկ	կապուտաչյա
դիասայլ	ողջակեզ	որեն	դիակիզարան
սրտակից	բարեխնամ	արան	բարեսրտորեն
վաղահաս	գետանց	իչ	վաղանցիկ
երկրաշուրջ	մրցատեղի	յա	մրցաշրջան

2.2. *Ընդգծել այն արմատները, որոնց կարող է ավելանալ ապ- նախածանցը /առանց երկրորդ ածանցի (8 միավոր):*

Ամենակարող, ուստր, ոսկեկար, անշնորհակալ, ցնցուղ, ցուցանմուշ, ազգայնամոլ, արդյունահանել, ուխտագնացություն, երասանակալ, հովանոց, շեշտակի, հոգեզալուստ, կենտրոնական, ստանձնել, երջանկահիշատակ, բուրաստան:

Առաջադրանք 3. (16 միավոր)

3.1. Առանձնացնել և գրել իմաստով իրար մոտ բառերի վեց զույգ (6 միավոր):

Պախուրց, հովատակ, անեծք, ճառասաց, երիվար, մարխ, ուղերձ, կերոն, բանախոս, երասան, բանադրանք, ներբող:

Պախուրց-երասան
հովատակ-երիվար
անեծք-բանադրանք
ճառասաց-բանախոս
մարխ-կերոն
ուղերձ-ներբող

3.2. Առանձնացնել և գրել իմաստով իրար հակառակ բառերի վեց զույգ (6 միավոր):

Վտիտ, գեր, անդորրավետ, ուսյալ, կայտառ, ստորամիտ, եսամոլ, տրտում, իմաստակ, ինքնուրաց, ազնվաբարո, աղմկոտ:

Վտիտ-գեր
անդորրավետ-աղմկոտ
ուսյալ-իմաստակ
կայտառ-տրտում
ստորամիտ-ազնվաբարո
եսամոլ-ինքնուրաց

3.3. Գտնել դարձվածքի սխալ բացատրություն ունեցող շարքերը (4 միավոր):

ա) խելքի բերել –զգաստացնել, լեզուն կապ ընկնել – պապանձվել, թեթև ձեռք – հաջողակ
բ) երկու խոսք –համառոտ, նեղն ընկնել-դժվարանալ, երկու աչքով նայել –ակնապիշ նայել
գ) երկինք գնալ – մեռնել, դուռը ցույց տալ – վտարել, գլխին բերել – վնասել
դ) դարն անցնել – հնանալ, աչքի ընկնել – առանձնանալ, լեզուն ծռել-մոռանալ

ե) բերանից թույլ – շատախոս, քրտինք թափել- չարչարվել, մի գլուխ –ամբողջական

զ) բերանը յուղոտ պատառ գցել – կաշառել, սիրտ անել-մխիթարել, անունը տալ –մտաբերել

Առաջադրանք 4. (16 միավոր)

4.1. *Ընդգծել նախադասությանը համապատասխանող բառը (4 միավոր):*

ա) Գործը քննող դատավորը ուշադրությամբ լսում էր երկու կողմերի (ցուցմունքները, ցուցումները):

բ) Ծերունու կոպերը (կուպրի, կապարի) նման կախվում էին ու փակում աչքերը. նա ննջում էր՝ ուշադրություն չդարձնելով շրջապատի աղմուկին:

գ) Յուրաքանչյուր ազգ պետք է (ոգեկոչի, ոգևորի) իր հերոս նահատակների անունն ու հիշատակը:

դ) Թատրոնում ներկայացման ընթացքում անհրաժեշտ է (պահպանել, պաշտպանել) լռություն:

4.2. Փակագծերում տրված բառերը տեղադրել նախադասությունների մեջ՝ դրանք ենթարկելով համապատասխան փոփոխությունների (4 միավոր):

Հայրս պատմում էր, որ իրենց փողոցի ծայրում մի կիսաքանդ մատուռ է (էր) եղել, ամեն անգամ՝ ներս մտնելիս, նրա մայրը երկյուղածորեն խոնարհվում էր դռների առաջ, խաչակնքում (էր)՝ հայացքը հառելով երկնքին:

(երկինք, ներս մտնել, խաչակնքել, լինել)

4.3. Ընտրել և ընդգծել ճիշտ տարբերակները (8 միավոր):

Ինձ վրայից, հարցրեցին, այս մասին, դստեր, կողմնացույցեր, գովազդներ, ասածի հակառակ, սեպագրեր, ի զարմանք, ձեռագիրներ, հորաքույրներ, կպչել է, փախչում է, ձկներ, դեղագործներ, մեր փոխարեն, ի գիտություն, մի՛ վազի, կայսրներ, իրիկնապահներ, ինչո՞ւ համար, չնայած հանգամանքներից:

Առաջադրանք 5. (12 միավոր)

5.1. Նշել խնդրառական սխալ ունեցող նախադասությունները և ուղղել (4 միավոր):

ա. Մենք համաձայնեցինք նրանց առաջարկած քայլերին ~~հետ~~ և նոր մարտավարության հիմք դրինք:

բ. Ես ցանկանում եմ ներողություն խնդրել բոլոր տուժածներից:

գ. Պետությունը պետք է սատար կանգնի բոլոր ազգաշահ ձեռնարկումներին:

դ. Յուրաքանչյուր ծնող պետք է սատարի իր զավակների ձգտումներ~~ին~~ ը:

5.2. Գտնել համաձայնության սխալ/ներ/ը և ուղղել (4 միավոր):

ա. Պետոյի ուշք ու միտքը լեռներում էր, սարերում, ձորերում:

բ. Ե՛վ լճափին հանգստացողների աղմուկը, և՛ ծառերի բույրը, և՛ լճից փչող հովը հոգիդ լցնում ~~է~~ են քաղցր զգացողությամբ:

գ. Մուրացիկին չէր անհանգստացնում ոչինչ. նա շարունակում էր թափառել կիսադատարկ փողոցներում:

դ. Ամենքն էլ ցանկանում ~~էր~~ էին առանձնանալ այդ հանդիսավոր արարողության ժամանակ:

5.3. Նշել բարդ ստորադասական նախադասությունը պարզ նախադասության փոխակերպելու ճիշտ տարբերակը (2 միավոր):

Միջնադարյան քնարերգուներն են, որ մեր գրականությանը նոր շունչ ու երանգ են հաղորդել:

ա. Միջնադարյան քնարերգուները մեր գրականությանը նոր շուն ու երանգ են հաղորդել:

բ. Միջնադարյան քնարերգուներն են՝ մեր գրականությանը նոր շուն ու երանգ տված:

գ. Մեր գրականությանը նոր շուն ու երանգ հաղորդածները միջնադարյան քնարերգուներն են:

դ. Միջնադարյան քնարերգուները նրանք են, որ մեր գրականությանը նոր շունչ ու երանգ են հաղորդել:

5. 4. Նշել ուղղակի խոսքը անուղղակիի փոխակերպման ճիշտ տարբերակը (2 միավոր):

Իր ուղեկիցներին հանձնարարեց.

- *Մի՛ սպասեք, մինչև նա հարցնի, ասե՛ք, որ ես գնացել եմ՝ իր գործով հետաքրքրվելու:*

ա. Իր ուղեկիցներին հանձնարարեց, որ չսպասեն, մինչև նա հարցնի, թող նրանք ասեն, որ ինքը գնացել է՝ նրա գործով հետաքրքրվելու:

բ. Իր ուղեկիցներին հանձնարարեց, որ չսպասեն, մինչև հարցնի, թող նրանք ասեն, որ նա գնացել է՝ նրա գործով հետաքրքրվելու:

գ. Իր ուղեկիցներին հանձնարարեց, որ չսպասեն, մինչև հարցնի, թող նրանք ասեն, որ ես գնացել եմ՝ նրա գործով հետաքրքրվելու:

դ. Իր ուղեկիցներին հանձնարարեց, որ չսպասեն, մինչև հարցնի, թող նրանք ասեն, որ ինքը գնացել է՝ իմ գործով հետաքրքրվելու: